## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՆԱԽԱՐԱՐ

N------------------------- "--------" ------------------------2014 թ.

ՀՀ արտաքին գործերի նախարարի տեղակալ

պրն Շ. ՔՈՉԱՐՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Քոչարյան

Ի պատասխան Ձեր 2014 թ. նոյեմբերի 25-ի N 1111/580894-14 գրության՝ կից ներկայացնում ենք Կոտ դ'Իվուարի կառավարության փոխանցած մշակույթի բնագավառում համագործակցության մասին երկկողմ միջկառավարական համաձայնագրի նախագծի հայերեն թարգմանությունը և պայմանագրի կնքման նպատակահարմարության մասին տեղեկանքը:

Առդիր՝ 9 թերթ:

Հարգանքով՝ Հ. ՊՈՂՈՍՅԱՆ

Արտաքին կապերի վարչություն
Կատ.՝ Է. Խաչատրյան
Հեռ.՝ 56-60-65

0010, Երևան, Հանրապետության Հրապարակ, Կառավարական տուն 3, Հեռ./Тел./Tel.: 52 93 49, ֆաքս/факс/fax (374 10) 52 39 22,
0010, Ереван, Площадь Республики, Дом правительства 3, Government Building 3, Republic Square, Yerevan 0010,
Էլ-փոստ/Эл.почта/E-mail: info@mincult.am, www.mincult.am

**ՏԵՂԵԿԱՆՔ**
**«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԿՈՏ Դ'ԻՎՈՒԱՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ՍՏՈՐԱԳՐՄԱՆ ՆՊԱՏԱԿԱՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության անկախության ձեռքբերումից հետո Կոտ դ'Իվուարի կառավարության հետ մշակույթի ոլորտում պետական մակարդակով համագործակցություն չի ծավալվել: Սույն համաձայնագրի ստորագրումը նոր հարթություն է տեղափոխում Հայաստանի Հանրապետության և Կոտ դ'Իվուարի միջև համագործակցությունը մշակույթի ոլորտում և իրավական հիմք ստեղծում դրա հետագա զարգացման համար:

Համաձայնագրի ստորագրումը թույլ կտա հավասարության, փոխ-շահավետության սկզբունքների հիման վրա զարգացնել երկու պետությունների միջև համագործակցությունը մշակույթի ոլորտում և խրախուսել երկու պետությունների տարածքներում գործող մշակութային կազմակերպությունների միջև ուղիղ կապերի հաստատումը, ինչպես նաև իրականացնել երկկողմ և բազմակողմ ծրագրեր, նախագծեր, նախաձեռնություններ և համաձայնագրի պահանջներից բխող այլ գործառույթներ ևս:

Մշակույթի ոլորտում սույն համաձայնագրի առկայությունը թույլ կտա խթանել փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող թատերական, երաժշտական, և անհատ կատարողների, ցուցահանդեսների փոխանակումը, ֆիլմերի փոխանակման միջոցով համագործակցությունը կինոյի ոլորտում, միջազգային փառատոներին և այլ մշակութային միջոցառումներին մասնակցությունը, միմյանց տարածքներում մշակութային և ֆիլմերի շաբաթների կազմակերպումը:

Կողմերը կխրախուսեն համագործակցությունը գրադարանների, արխիվների, թատրոնների միջև՝ խթանելով տեղեկատվության և փորձի փոխանակումը:

Կողմերը կստեղծեն խառը հանձնաժողով, որի նիստերը կգումարվեն երկու տարին մեկ անգամ՝ Երևանում և/կամ Աբիջանում: